

ԺԴ.00.11 - ԲԺՇԿԱԿԱՆ ՌԱԴԻՈԼՈԳԻԱ

Բժշկական ռադիոլոգիայի հիմունքներ. Բժշկական ռադիոլոգիան, որպես գիտական և կլինիկական առարկա: Հայրենական և արտասահմանյան բժշկական ռադիոլոգիայի զարգացման հիմնական փուլերը: Բժշկական ռադիոլոգիայի ոլորտում գլխավոր միջազգային և հայրենական գիտական միությունները: Արտասահմանում գլխավոր գիտահետազոտական ռադիոլոգիական կենտրոնները: Բժշկական ռադիոլոգիայի պարբերական և բիբլիոգրաֆիկ հրատարակումներ, տեղեկատվություններ: Արտասահմանյան ռադիոլոգիական գլխավոր ամսագրեր և ռեֆերատիվ հրատարակումներ: Աշխատանք բիբլիոգրաֆիկ հրատարակումների հետ: Ինտերնետի համակարգով բիբլիոգրաֆիկ, գիտական և գովազդային տեղեկատվության փնտրում:

Կլինիկական ռադիացիոն կենսաբանություն. Սուր ճառագայթային հիվանդություն – ընդհանուր բնութագիրը, ախտանշանները, ընթացքի փուլերը, կլինիկական դրսևորումները: Բժշկական աշխատողներին գործողությունները ռադիացիոն վթարների, զանգվածային ռադիացիոն և զուգակցված ախտահարումների ժամանակ: Քրոնիկական ճառագայթային հիվանդություն – կանխարգելումը, կլինիկական դրսևորումները: Ճառագայթման գենետիկ հետեվանքները: Հարաբերական փոքր չափաբաժինների կենսաբանական ազդեցությունները: Գերծայնի մագնիսական դաշտերի կենսաբանական ազդեցությունը:

Ինֆորմատիկայի հիմունքները: Ռադիոլոգիայում հաշվիչ համակարգերը. Ինֆորմատիկան, որպես գիտական գիտելիքների ոլորտ: Ճառագայթային ախտորոշման մեջ հաշվողական սարքերի կիրառումը; բժշկական պատկերի ստացումը: Տվյալների հավաքման, պահպանման և վերլուծության ավտոմատացում: Տվյալների տեղեկատվական բազայի ստեղծում:

Հեռուստառադիոլոգիայի կազմակերպում և սարքերով հագեցում: Դրա դերը անհետաձգելի ախտորոշման և փորձաքննության գործընթացում: Հեռուստակոնսուլտացիաներ, հեռուստաժողովներ: Ուսումնական գործընթացում հեռուստառադիոլոգիայի օգտագործումը: Ինտերնետ համացանցի կառուցման

սկզբունքները: Ինտերնետի տեղեկատվական պահուստների հայթհայթում:
Ինտերնետը՝ համաշխարհային համակարգչային ցանցերի միություն:
Ճառագայթային ախտորոշման ծրագրային ապահովում:

Դոզիմետրիայի հիմունքները. Դոզիմետրիկ մեծությունները և միավորները:
Դոզայի հզորությունը և չափման միավորները: Անձնակազմի և հիվանդների
հակառադիացիոն պաշտպանման միջոցների նմենկլատուրան: Սարքերի
օգնությամբ հիվանդների ճառագայթման մակարդակի գնահատումը: Անձնակազմի
և հիվանդների ճառագայթային ծանրաբեռման հաշվառում:

Ճառագայթային ախտորոշման եղանակներ և միջոցներ:

Ռենտգենաբանական եղանակ. Ընդհանուր տեղեկություններ բժշկական
ռենտգենաբանական սարքերի մասին: Բժշկական ռենտգենաբանական սարքերի
դասակարգումը՝ սարքեր ախտորոշման և բուժման, ստացիոնար ռենտգեն
ախտորոշիչ համակարգեր, շարժական, քանդվող և տեղափոխվող սարքեր,
հատուկ նշանակության սարքեր՝ վնասվածքաբանության, վիրաբուժության,
անգիոգրաֆիայի, ատամնաբուժության, ուռուլոգիայի, մամմոլոգիայի, նյարդաախ-
տորոշման համար: Տոմոգրաֆիկ /շերտավոր/ և ֆյուորոգրաֆիկ սարքեր:
Ռենտգենյան հետազոտման ցուցումներ և հակացուցումներ: Ռենտգենյան
հետազոտման նշանակման կարգը: Կոնտրաստ նյութերի ձևերը: Հիվանդի տարիքի
և քաշի հետ կապված կոնտրաստ նյութի տեսակի և չափաբաժնի որոշումը:
Կոնտրաստ նյութի ընդունումից /ներարկումից/ առաջ հիվանդին բացատրումը
/պատրաստումը, դիետան, դեղամիջոցները/: Կոնտրաստ նյութի ներարկման ուղի-
ները: Կոնտրաստ նյութերի ներարկումից հետո ռեակցիան և բարդությունները:
Տեղային բարդությունները՝ դեղամիջոցի էքստրավազացիա, ֆլեբիտ,
թրոմբոէմբոլիա: Տեղային ռեակցիաների և բարդությունների բուժումը: Ընդհանուր
ռեակցիաներ՝ արյան հոսք դեպի գլուխ, մարմնում ջերմության զգացում,
սրտխառնոց, ցան, կեղծ կրուպ: Ալլերգիկ և տոքսիկ բնույթի ծանր բարդություններ:
Ռենտգենագրաֆիա, դրա ձևերը /ժապավենաձև, թվային, նկարի ուղղակի
մեծացումով, հեռուստառենտգենագրաֆիա, էլեկտրառենտգենագրաֆիա/:
Տեսարանային և նշանակետային նկարներ: Ռենտգենագրաֆիկ թվային

վերափոխիչներ: Ռենտգենագրաֆիայի ժամանակ հիվանդների և անձնակազմի ռադիացիոն պաշտպանությունը: Ռենտգենագրաֆիայի ժամանակ դոզայի ծանրաբեռնումները: Ֆյուրոգրաֆիան, որպես զանգվածային ստուգիչ հետազոտման եղանակ: Թվային ֆյուրոգրաֆիա:

Արյունատար և ավշային անոթների ռենտգենյան հետազոտում /անգիոգրաֆիա/: Անոթի պունկցիայի կամ կատետերիզացիայի միջոցով արտերիոգրաֆիա: Անոթի պունկցիայի կամ կատետերիզացիայի միջոցով վենոգրաֆիա:

Ռենտգենյան համակարգչային շերտագրում /ՀՇ/. Համակարգչային շերտագրման /ՀՇ/ պատմությունը և այժմյան վիճակը ախտորոշման մեջ: ՀՇ նկարի ձևավորման սկզբունքը: ՀՇ ժամանակ ուղղակի և անուղղակի կոնտրաստավորման եղանակը: Կոնտրաստային նյութերի կիրառման ցուցումները և հակացուցումները; չափաբժինները և ներարկման եղանակները: Հատուկ եղանակներ՝ դինամիկ ՀՇ, ՀՇ-անգիոգրաֆիա, ՀՇ-ուռոգրաֆիա, ՀՇ-խոլանգիոգրաֆիա: Համակարգչային տոմոգրամների ռենտգենաանատոմիկ և դենսիտոմետրիկ վերլուծություն:

Մագնիսառեզոնանսային շերտագրում /ՄՌՇ/. Մագնիսառեզոնանսային ինտրոսկոպիայի ֆիզիկական հիմքերը և տեխնիկան: Կոնտրաստավորումը ՄՌՇ-ն ժամանակ: Ցուցումները և հակացուցումները: Կոնտրաստային նյութերի ձևերը, դրանց դոզավորումը և ներարկման եղանակները: Կոնտրաստային նյութերի ներարկման բարդությունների կանխարգելումը և պայքարի ձևերը դրանց դեմ: Հատուկ եղանակները: Դինամիկ ՄՌՇ, ՄՌ-անգիոգրաֆիա, ՄՌ-սիալոգրաֆիա, ՄՌ-լիմֆոգրաֆիա, կրծքային ծորանի ՄՌՇ, ՄՌ-ուռոլոգիա, ՄՌ-խոլանգիոպանկրեատոգրաֆիա:

Հիվանդի ինստրուկտաժ և պատրաստում: Հիվանդի ճիշտ դիրքում տեղադրում: ՄՌՇ-ն նկատմամբ հատուկ հակացուցումներ: Հիվանդների պրեմեդիկացիա: ՄՌՇ-ն կաբինետում անձնակազմի և հիվանդների անվտանգության միջոցառումներ: Անհետաձգելի միջոցառումներ /մագնիսի մարում/, հիվանդի էվակուացում:

Գերծայնային եղանակ. Գերծայնի ֆիզիկական հիմունքները: Գերծայնային ալիքների բնութագիրը, նրանց հատկությունները /թափանցելու հնարավորությունը, անդրադարձումը, կլանումը, ցրումը/: Գերծայնային ճառագայթման

ինտենսիվությունը: Գերձայնային տատանումների հաճախականությունը, ալիքի փուլը և երկարությունը, գերձայնային տատանումների տեղաբաշխումը՝ կախված հաճախականությունից: Գերձայնի կենսաբանական ազդեցությունը: Գերձայնային հետազոտման ցուցումները: Գերձայնային պատկերի ձևավորումը: Էխոնեգատիվություն, էխոպոզիտիվություն: Գերձայնային ճառագայթի անկման կրիտիկական անկյան հասկացություն: Ստացվող տեղեկատվության կախվածությունը գերձայնային տատանման հաճախականությունից: Գերձայնային հետազոտման մեթոդիկան՝ միաչափ էխոգրաֆիա, երկչափ էխոգրաֆիա, դոպլերոգրաֆիա, գունավոր դոպլերոգրաֆիա, դոպլեքս սոնոգրաֆիա, եռաչափ էխոկարդիոգրաֆիա, գերձայնային անգիոգրաֆիա, գերձայնային հետազոտում էներգետիկ դոպլերի և նատիվ հյուսվածքային հարմոնիկայի եղանակով: Էլաստոգրաֆիա, ներանոթային գերձայնային հետազոտություն: Գերձայնային հետազոտման կոնտրաստ նյութերը: Գերձայնային հետազոտման եղանակների հնարավորությունները օրգանների մորֆոլոգիայի և ֆունկցիայի հետազոտման մեջ: Գերձայնային հետազոտման դերը երեխաների և հղիների հետազոտման ժամանակ: Դիսպանսերային խմբերի հետազոտման ժամանակ գերձայնային եղանակի նշանակությունը: Ինտերվենցիոն միջամտությունները գերձայնի հսկողության տակ:

Ռադիոնուկլիդ եղանակ. Ռադիոնուկլիդային ախտորոշիչ համակարգ՝ ճառագայթման աղբյուրը, հետազոտման օբյեկտը, ճառագայթման ընդունիչները: Ռադիոֆարմ պրեպարատները in vivo հետազոտման համար, ստացման եղանակները, հիմնական պրեպարատների բնութագիրը, նրանց ընտրությունը: Ռեագենտներ in vitro հետազոտման համար:

Ռադիոնուկլիդային հետազոտման ցուցումները և հակացուցումները: Հետազոտման ընտրությունը կախված նպատակներից /կառուցվածքային կամ ֆունկցիոնալ վիճակների գնահատում/: In vivo հետազոտման եղանակները՝ ռադիոմերտրիա /դիստացիոն, կոնտակտային/, ռադիոգրաֆիա: Սցինտիգրաֆիա՝ ստատիկ, դինամիկ: Էմիսիոն համակարգչային տոմոգրաֆիա՝ միաֆոտոնային, պոզիտրոնային: Նեյտրինո – ակտիվացիոն վերլուծում: Ռադիոնուկլիդային

հետազոտման արդյունքների վերլուծություն: Ռադիոֆարմացեպտիկ պրեպարատների հետ աշխատանքի ռադիացիոն անվտանգության օրենքները, դրանց պահպանումը և ստուգումը: Անձնակազմի դոզային ծանրաբեռնումները ռադիոնուկլիդ հետազոտման ժամանակ: Հիվանդների ճառագայթման ռեգլամենտացում:

Ինտերվենցիոն ճառագայթային միջամտություններ. Էնդովազալ ռենտգենյան, գերձայնային ՀՇ, ՄՌՇ միջամտություններ: Ռենտգեն-էնդովասկոլյար դիլատացիա և ռեկանալիզացիա, պրոթեզավորում, ֆիլտրերի և ստենտերի տեղադրում: Ռենտգեն – էնդովասկոլյար օկլյուզիա /մեխանիկական, ֆարմակոլոգիական/: Գերձայնային էնդովասկոլյար միջամտություններ: Էքստրավազալ ճառագայթային միջամտություններ՝ էնդոբրոնխիալ, էնդոէզոֆագեալ, էնդոգաստրալ, էնդոբիլիար, էնդոուռինալ: Միջամտություններ արգանդի փողերի վրա:

Գերձայնի, ՀՇ, ՄՌՇ հսկողության տակ պունկցիաներ, բիոպսիաներ և բուժական միջամտություններ:

Վնասվածքների և հիվանդությունների ճառագայթային ախտորոշում.

Հիվանդի ճառագայթային հետազոտման համակարգ՝ անամնեզի, կլինիկական, ինստրումենտալ և լաբորատոր տվյալների գնահատում: Ճառագայթային հետազոտման պլանի մշակում, ճառագայթային հետազոտման իրականացում, ստացված տեղեկատվության տրամաբանական վերլուծություն:

Կմախքամկանային համակարգ. Ոսկրերի, հոդերի և փափուկ հյուսվածքների ճառագայթային հետազոտման եղանակները:

Ոսկրերի մորֆոմետրիա և դենսիտոմետրիա: Օստեոպենիայի և օստեոպորոզի ախտորոշումը: Համակարգային օստեոպորոզներ: Ոսկրերի կոտրվածքների և հոդախախտերի մեխանիզմները և տեսակները: Ոսկրերի, հոդերի և փափուկ հյուսվածքների ճառագայթային սեմիոտիկա: Ռենտգենաբանական պատկերում ոսկրերի կոտրվածքների սերտաճում, սերտաճման խանգարումներ /ավելորդ ոսկրային կոշտուկ, դանդաղ սերտաճում, կեղծ հոդի առաջացում/:

Կմախքամկանային համակարգի հիվանդությունների ճառագայթային սեմիոտիկա: Ինֆեկցիոն, սնկային և պարազիտար ախտահարումների ճառագայթային

պատկերը: Օստեոմիելիտներ, արթրիտներ, սպոնդիլիտներ, ոսկրերի և հողերի տուբերկուլյոզ:

Դիստրոֆիկ ախտահարումներ: Արթրոզներ, ասեպտիկ նեկրոզներ, վերակազմավորման գոտիներ, սթրես-կոտրվածքներ: Ողնաշարի դիստրոֆիկ պրոցեսներ /դիսկոզ, օստեոխոնդրոզ, սպոնդիլյոզ, ֆասեթային արթրոզ, անկիլոզացնող հիպերոսթոզ/: Կմախքի փոփոխությունները էնդոկրին և արյան համակարգի հիվանդությունների ժամանակ:

Ոսկրերի, հողերի և փափուկ հյուսվածքների ուռուցքանման գոյացությունները և բարորակ ուռուցքները: Կմախքում՝ չարորակ ուռուցքների մետաստազների ճառագայթային հայտնաբերումը և ճառագայթային պատկերը:

Սիրտ-անոթային համակարգ. Հակիրճ անատոմոֆիզիոլոգիական տվյալներ: Սիրտ-անոթային համակարգի վնասվածքների և հիվանդությունների հակիրճ կլինիկական պատկերը: Սրտի և անոթների գերձայնային, ռենտգենյան, ռադիոնուկլիդ, ՀՇ և ՄՌՇ հետազոտման եղանակները: Սրտի և անոթների ճառագայթային անատոմիա և ֆիզիոլոգիա: Սրտի և անոթների ախտահարումների ճառագայթային ախտանիշներ և համախտանիշներ: Սրտի, աորտայի, թոքային զարկերակի, կրծքավանդակի խոռոչի խոշոր երակների զարգացման արատներ: Կարդիոմիոպատիաներ: Սրտի իշեմիկ հիվանդություն, սրտամկանի ինֆարկտ, սրտի անևրիզմա: Հիպերտոնիկ հիվանդություն: Սրտի ուռուցքներ: Պերկարդիտներ: Աորտիտ, աորտայի անևրիզմա: Հիմնական կլինիկական համախտանիշների ժամանակ սրտի, կրծքային աորտայի և թոքային զարկերակի հետազոտման ախտորոշիչ ծրագրեր:

Շնչառական օրգաններ: Ստոծանի: Միջնորմ - Հետազոտման ճառագայթային ինստրումենտալ եղանակները՝ ռենտգենոգրաֆիա, ֆյուրոգրաֆիա, ռենտգենոսկոպիա, ՀՇ և ՄՌՇ, սոնոգրաֆիա, անգիոպլումնոգրաֆիա, բրոնխիալ արտերիոգրաֆիա, սցինտիգրաֆիա և այլն:

Բրոնխիալ անցանելիություն, թոքերում արյան շրջանառության և հեղուկի փոխանակման խանգարումների ճառագայթային պատկերը: Թոքային հիպերթենզիա: Թոքային զարկերակի և նրա ճյուղերի թրոմբոէմբոլիա:

Սցիտնիգրաֆիայի, ՀՇ – անգիոգրաֆիայի ՄՌՇ դերը դրա ախտորոշման մեջ: Թոքի ինֆարկտ: Թոքերի այտուց: Կրծքավանդակի, թոքերի, պլևրայի, ստոծանու վնասվածքներ: Ստոծանու ճողվածք: Բրոնխիալ ասթմա: Խրոնիկ բրոնխիտներ: Թոքերի երկրորդային էմֆիզեմա: Բրոնխոէկտատիկ հիվանդություն: Սուր թոքային դիստրես – համախտանիշ: Սուր թոքաբորբեր /բակտերիալ, վիրուսային, միկոպլազմային, հետվիրահատական, կանգային/: Թոքերի սնկային ախտահարումներ: Թոքերի արսցես և գանգրենա, խրոնիկական թոքային թարախակալումներ, թոքամզի էմպիեմա: Թոքերի ախտահարումները համակարգային հիվանդությունների և արյան հիվանդությունների ժամանակ: Թոքերի ինտերստիցիալ հիվանդություններ: Պնևմոկոնիոզներ: Ոչ սպեցիֆիկ պնևմոսկլերոզներ, խրոնիկական թոքաբորբեր: Թոքերի սարկոիդոզ: Հիստիոցիտոզ X: Թոքային տուբերկուլյոզի ճառագայթային ախտորոշումը: Պլևրիտներ: Թոքերի բարորակ ուռուցքներ: Թոքերի, պլևրայի և ստոծանու չարորակ առաջնային և երկրորդային /մետաստատիկ/ ուռուցքներ: Մեդիաստենիտ: Միջնորմում ծավալային գոյացություններ /ուրցագեղձի հիպերպլազիա, թիմոմաներ, ներկրծքային խպիպ/:

Մարսողական համակարգ. Հետազոտման ճառագայթային ինստրումենտալ եղանակները՝ /ռենտգենաբանական, ուլտրաձայնային, ռադիոնուկլիդ, ՀՇ և ՄՌՇ, էնդոսկոպիա/: Վիրտուալ էզոֆագոսկոպիա, գատրոսկոպիա, կոլոնոսկոպիա:

Ըմպան և կերակրափող. Ըմպանի և կերակրափողի ֆունկցիոնալ խանգարումների ճառագայթային ախտորոշում, դիսֆագիաներ: Էզոֆագիտներ: Ռեֆլյուքս-էզոֆագիտ: Ստոծանու կերակրափողի անցքի ճողվածք: Կերակրափողի այրվածք: Ըմպանի և կերակրափողի օտար մարմիններ: Հետըմպանային արսցես: Կերակրափողի թափածակում: Կերակրափողի երակների վարիկոզ լայնացում: Կերակրափողի ախալազիա: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Վիրահատված կերակրափողը ռենտգենյան պատկերում:

Ստամոքս և 12-մատնյա աղի. Վնասվածքներ, օտար մարմիններ: Ստամոքսի և 12-մատնյա աղիքի ֆունկցիոնալ խանգարումներ: Սուր գաստրիտ: Խրոնիկական գաստրիտներ: Էրոզիա: Խոցային հիվանդություն և դրա բարդությունները: Մենետ-

րիեյի հիվանդություն: Դուռդենիտ: Լիմֆոիդ հիպերպլազիա: Ստամոքսի բեզոարներ: Պոլիպներ և պոլիպոզ: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Վիրահատական միջամտություններից հետո ստամոքսի և 12-մատնյա աղիքի ճառագայթային պատկերը: Հետվիրահատական բարդությունների և համախտանիշների ախտորոշումը:

Բարակ աղի. Չարագաման արատներ /ատրեզիա և ստենոզ, Մեկկելի դիվերտիկուլ, երկատում, դիվերտիկուլոզ/: Մալաբորբքիա և իմունոդեֆիցիտ /ցելիակիա, սարու, Ուիպլի հիվանդություն, լիմֆանգիէկտազիաներ, սննդային ֆերմենտների պակաս/: Կրոնի հիվանդություն: Անոթային խանգարումներ /իշեմիա, վենոզ թրոմբոզ/: Ինֆեկցիոն էնտերիտներ /տուբերկուլոզ, իերսիկոզ, սալմոնելլոզ, կամպիլոբակտեր/: Խոցային էնտերիտ: Լիմֆոիդ հիպերպլազիա: Կպումային հիվանդություն: Պոլիպոզ: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Բարակ աղու մեխանիկական և դինամիկ անանցելիություն: Աղիքային ճողվածքներ: Բարակ աղու վիրահատություններից հետո ճառագայթային պատկերը:

Հաստ աղի. Չարագաման արատներ /ստենոզներ և ատրեզիա, երկատում, միկրոկոլոն, Գիրշպրունգի հիվանդություն, անոռեկտալ անոմալիաներ/: Դիվերտիկուլոզ, դիվերտիկուլիտ: Ինֆեկցիոն կոլիտներ, խոցային կոլիտ, գրանուլեմատոզ կոլիտ: Տուբերկուլոզ: Սուր և խրոնիկ ապենդիցիտ, բարդությունները: Հաստ աղու դիսկինեզիա, փորկապություն: Անոռեկտալ էվակուացիայի խանգարումներ: Պոլիպներ և պոլիպոզ: Հաստ աղու վիրտուալ կոլոնոսկոպիա: Հաստ աղու մեխանիկական և դինամիկ անանցելիություն: Ստամոքս-աղիքային արյունահոսություններ: Մեզենտերիալ արյան շրջանառության խանգարումներ: Բարորակ և չարորակ ուռուցքներ: Հաստ աղու վիրահատություններից հետո ճառագայթային պատկերը:

Լյարդ և լեղուղիներ. Լյարդի և լեղուղիների զարգացման արատներ: Լյարդի դիֆուզ ախտահարումներ /ճարպային հեպատոզ, հեպատիտներ, ցիռոզներ, արյան հիվանդություններից առաջացած փոփոխություններ, Վիլսոնի հիվանդություն, հեմոխրոմատոզի ժամանակ փոփոխություններ/: Լյարդի օջախային ախտահարումներ /կիստաներ, էխինակոկ, ալվեոկոկ, աբսցես, ֆոկալ, հանգույցային

հիպերպլազիա, հեմանգիոմա, ադենոմա, հեպատոմա, խոլանգիոկարցինոմա, չարորակ ուռուցքների մետաստազներ/։ Պիկի պսևդոցիոզ։ Բադ-Խիարիի համախտանիշի ճառագայթային պատկերը։ Պորտալ հիպերտենզիայի ճառագայթային պատկերը։

Լեղաքարային հիվանդություն։ Հիպերպլաստիկ խոլեցիստոզներ /խոլեստերոզ, ադենոմիո-մատոզ/։ Սուր խոլեցիստիտներ։ Խրոնիկական խոլեցիստիտներ։ Պերիխոլեցիստիտ։ Լեղապարկի ջրգողություն։ Խոլանգիտներ։ Լեղապարկի և լեղուղիների բարորակ և չարորակ ուռուցքներ։ Դուոդենալ մեծ պտկիկի քաղցկեղ։ Հետխոլեցիստէկտոմիկ համախտանիշ։ ՄՌ - պանկրեատոխոլանգիոգրաֆիա։ Էնդոսկոպիկ ռետրոգրադ պանկրեատոխոլանգիոգրաֆիա։

Ենթաստամոքսային գեղձ. Ճառագայթային հետազոտման եղանակները։ Զարգացման արատներ /հիպոպլազիա, էկտոպիկ գեղձ և այլն/։ Սուր պանկրեատիտներ։ Ենթաստամոքսային գեղձի աբսցես։ Խրոնիկ պանկրեատիտներ, կեղծ կիստաներ։ Քարեր և կալցիֆիկատներ։ Բարորակ և չարորակ ուռուցքներ։ Շաքարային դիաբետի, ճարպակալման, Զոլինգեր-Էլիսոնի համախտանիշներ և այլն։

Փայծախ. Զարգացման արատներ /ասպլենիա, պոլիսպլենիա, ավելորդ փայծախ, թափառող փայծախ/։ Փայծախի դիֆուզ ախտահարումներ /արյան, լյարդի և այլ հիվանդությունների ժամանակ/։ Օջախային ախտահարումներ /աբսցես, տուբերկուլյոզ, էխինոկոկ, ինֆարկտ, ուռուցք/։ Փայծախային զարկերակի անևրիզմա։

Արտաօրգանային ախտահարումներ. Դիֆուզ և սահմանափակ պերիտոնիտ։ Արտաօրգանային աբսցեսներ /ենթաստոծանային, ենթալյարդային, միջաղիքային, կոնքային/։ Հետորովայնամզային ֆիբրոզ։ Արտաօրգանային ուռուցքներ /որովայնի պատի, որովայնամզի, մեջընդերքի/։ Որովայնի խոռոչի և հետորովայնամզային տարածության լիմֆատիկ հանգույցների ախտահարման ճառագայթային ախտորոշումը։

Միզասեռական համակարգ. Արտազատական օրգանների ճառագայթային և գործիքային հետազոտման եղանակներ։ Վնասվածքներ, օտար մարմիններ։

Հետորովայնամզային արյունազեղում: Երիկամների, միզածորանների, միզապարկի և միզուկի զարգացման արատներ: Բորբոքային ախտահարումներ /գլոմերուլոնեֆրիտ, պիելոնեֆրիտ, աքսցես, կարբունկուլ, տուբերկուլոզ, պիոնեֆրոզ, պարանեֆրիտ/: Պիելոէկտազիա, հիդրոնեֆրոզ: Նեֆրոսկլերոզ: Երիկամաքարային հիվանդություն: Օբստրուկտիվ ուրոպատիա: <<Համր>> երիկամ: Միզապարկ-միզախորանային ռեֆլյուքս:

Երիկամների կիստաներ: Երիկամների պոլիկիստոզ: Նեֆրոկալցինոզ: Երիկամների, միզածորանների, միզապարկի բարորակ և չարորակ ուռուցքներ:

Նեֆրոզեն զարկերակային հիպերտենզիա: Երիկամային զարկերակի ստենոզ: Երիկամային զարկերակի և նրա ճյուղերի էմբոլիա և թրոմբոզ: Երիկամի ինֆարկտ և իշեմիա: Երիկամային երակի թրոմբոզ:

Պրոստատիտներ: Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիա: Աքսցես: Շագանակագեղձի կիստաներ և ուռուցքներ: Էպիդիդեմիտ: Խրոնիկական էպիդիդեմիտ, վարիկոցելե, հիդրոցելե, սպերմատոցելե: Չիջած ամորձի: Ամորձու ուռուցք: Իմպոտենցիայի ճառագայթային հետազոտում:

Մենստրուալ-օվարիալ ցիկլի խանգարումների ճառագայթային հետազոտում: Արգանդի, հավելումների և արտաքին սեռական օրգանների զարգացման արատներ:

Բորբոքային ախտահարումների ճառագայթային ախտորոշում /էնդոմետրիոզ, ադենոմիոզ, էնդոմետրիոմի սուր վարակ, պիոսալպինգս, խողովակ-օվարիալ աքսցես/: Հեղուկի ներարգանդային կուտակումներ: Արգանդի ուռուցքներ /լեյոմիոմա, էնդոմետրիալ պոլիպ, արգանդի մարմնի, վզիկի քաղցկեղ, կարցինոսարկոմա, լիմֆոմա/: Ձվարանի կիստաներ: Սկլերոկիստոզ ձվարանների համախտանիշ: Ձվարանի ուռուցքներ: Պտղի և պլացենտայի արատներ: Տարբեր փուլերում հղիության ընդհատման պատկերը: Էկտոպիկ հղիություն:

Կրծքագեղձեր. Կանանց սկրինինգային հետազոտությունների նշանակությունը և դրանց կազմակերպումը: Ճառագայթային հետազոտման եղանակները՝ տեսարանային և նշանակակետային նկարներ /մամոգրաֆիա/, կոմպրեսիայով նկարներ, կիստո- և պնևմոկիստոգրաֆիա, գալակտոգրաֆիա /դուկտոգրաֆիա/,

սոնոգրաֆիա, դոպլերոգրաֆիա, սցինտիգրաֆիա, ՀՇ, ՄՌՇ: Գերձայնի հսկման տակ պունկցիոն բիոպսիա: Կրծքագեղձի բորբոքային ախտահարումներ /մաստիտներ, աբսցես, տուբերկուլյոզ, ակտինոմիկոզ/: Պարզ մեծ կիստաներ, ադենոմաներ, ֆիբրոադենոմաներ, անգիոլիպոմաներ: Սպիններ կրծքագեղձում: Չարորակ ուռուցքների ախտորոշումը: Կրծքագեղձի հետվիրահատական փոփոխությունները: Պլաստիկ վիրահատություններից հետո ճառագայթային պատկերը: Տղամարդկանց մոտ կրծքագեղձի հիվանդությունների ճառագայթային ախտորոշումը:

Նյարդային համակարգ. Գանգի և ողնաշարի վնասվածքներ: Գանգի և ողնաշարի զարգացման արատներ: Ողնաշարի բորբոքային ախտահարումներ: Գանգի և ողնաշարի ուռուցքներ: Գանգի և ողնաշարի փոփոխությունները տարբեր հիվանդությունների ժամանակ /ֆիբրոզ օստեոդիստրոֆիա, ռետիկուլոհիստոցիտոզներ, ոչ ինֆեկցիոն գրանուլեմաներ, արյան և էնդոկրին համակարգի հիվանդություններ, վիտամինային հաշվեկշռի խանգարումներ/:

Գլխուղեղի և ողնուղեղի ճառագայթային հետազոտման եղանակները: Գլխուղեղի և ողնուղեղի վնասվածքներ: Գլխուղեղի և ողնուղեղի զարգացման արատներ: Գլխուղեղի ուռուցքներ: Թուրքական թամբի շրջանի ուռուցքներ, հիպոֆիզի միկրոադենոմաների որոշումը:

Գլխուղեղի անոթային ախտահարումներ: Գլխուղեղում լրկալ հեմոդինամիկայի ֆունկցիոնալ ՄՌ – ախտորոշում: Գլխուղեղում ռեցեպտոր ապարատի և փոխանակության գործընթացների գնահատման մեջ պոզիտրոնային էմիսիոն շերտագրության դերը: Ուղեղանյութի մեջ և թաղանթերի տակ արյունազեղումներ: Գլխուղեղի անոթների թրոմբոէմբոլիա: Ուղեղի ինֆարկտ: Ուղեղային անոթների անևրիզմաներ:

Գլխուղեղի ինֆեկցիոն ախտահարումներ /մենինգիտ, էնցեֆալիտ, ուղեղի աբսցես, պարազիտար հիվանդություններ՝տոքսոպլազմոզ, ամեոբիազ, ցիստիցերկոզ, էխինակոկոզ/: Գլխուղեղի սպիտակ նյութի հիվանդություններ /ցրված սկլերոզ, դեմիելինիզացիա, Պարկինսոնի հիվանդություն, Վիլսոնի հիվանդություն/:

Վերտերբրոգեն ցավային համախտանիշ: Ողնուղեղի և դրա թաղանթների, նյարդային արմատիկների և գանգլիաների բորբոքային դիստրոֆիկ և ուռուցքային ախտահարումների ճառագայթային պատկերը: Արախնոիդիտի ճառագայթային պատկերը: Ողնուղեղի և թաղանթների ուռուցքների և կիստաների ճառագայթային պատկերը: Զարկերակային և երակային մալֆորմացիաներ: Միելոմենինգոցելե:

Տեսողության օրգաններ. Աչքի և ակնակապիճի ճառագայթային հետազոտման եղանակները: Վնասվածքների ճառագայթային ախտորոշում: Ակնագնդում և ակնակապիճում օտար մարմինների հայտնաբերման և տեղակայման եղանակները: Ակնակապիճի զարգացման արատների, աբսցեսների և պսևդոուռուցքների ճառագայթային պատկերը: Էկզոֆթալմ, տարբերակիչ ախտորոշումը: Նեյրոֆիբրոմատոզի ժամանակ ախտահարումները: Աչքի և ակնակապիճի ուռուցքներ:

Քիթ, կոկորդ, ականջ. Քունքուկրի, քթի, քթըմպանի, քթի հավելյալ ծոցերի, ըմպանի ճառագայթային հետազոտման եղանակները: Օրգանների վնասվածքների և օտար մարմինների ճառագայթային ախտորոշում: Զարգացման արատներ: Սուր օտիտ, սուր մաստոիդիտ: Խրոնիկական օտիտ: Օտոսկլերոզ: Վիրահատված ականջ: Քթի և քթըմպանի բարորակ և չարորակ ուռուցքներ: Քթըմպանի ադենոիդներ: Սուր սինուսիտներ: Խրոնիկական սինուսիտներ: Ծոցերի կիստաներ: Հավելյալ ծոցերի շրջանների բարորակ և չարորակ ուռուցքներ: Ըմպանի ախտահարումներ:

Դիմաձևոտային շրջան. Դիմաձևոտային շրջանի ճառագայթային հետազոտման եղանակները: Դիմաձևոտային շրջանի վնասվածքներ և օտար մարմիններ, հոդախախտեր և ատամների կտրվածքներ: Դիմաձևոտային շրջանի բնածին և ձեռքբերովի դեֆորմացիաներ, ատամների զարգացման արատներ, քիմքի ճեղվածք: Ծնոտի օստեոմիելիտի ճառագայթային ախտորոշումը: Ծնոտների կիստաների, բարորակ և չարորակ ուռուցքների ճառագայթային պատկերը: Քունքաձևոտային հողի ախտահարումներ /արթրիտ, ռևմատոիդ արթրիտ, արթրոզ/:

Էնդոկրին համակարգի օրգաններ. Հիպոթալամուսի, հիպոֆիզի, վահանաձև և հարվահանաձև գեղձերի, մակերիկամների, սեռական գեղձերի ձևաբանության և ֆունկցիայի հետազոտման ճառագայթային եղանակները: Հիպոֆիզի, վահանաձև և հարվահանաձև գեղձերի, մակերիկամների, ձվարանների կլինիկա-ռադիոլոգիական համախտանիշներ և ախտորոշիչ ծրագրեր: Դիֆուզ խպիպի, հանգուցավոր խպիպի, վահանագեղձի բարորակ հանգուցավոր գոյացությունների, աուտոիմուն թիրեոիդիտի, չարորակ ուռուցքների տարբերակիչ ախտորոշումը: Հիպո- և հիպերթիրեոզի ճառագայթային հետազոտումները: Մակերիկամի ադենոմայի, կիստաների, միակողմանի և երկկողմանի հիպերպլազիայի, մակերիկամում քաղցկեղի մետաստազների ճառագայթային հետազոտման և ախտորոշման եղանակները: Իցենկո-Կուշինգի հիվանդության, հիպոգոնադիզմի, հիպերպարաթիրեոզի, պսևդոհիպոպարաթիրեոզի, ակրոմեգալիայի, ամենոռեայի ճառագայթային հետազոտումը:

Անհետաձգելի ճառագայթային ախտորոշում. Վերակենդանացման բաժիններում, ինտենսիվ թերապիայի բաժնում կամ պալատներում, տնային պայմաններում անհետաձգելի ճառագայթային օգնություն: Հեռուստառադիոլոգիայի դերը անհետաձգելի ախտորոշման մեջ: Օրգանների և համակարգերի /գանգ, գլխուղեղ, սուր ողնաշարային վնասվածք, ուսագոտի և վերին վերջույթներ, կոնք և ստորին վերջույթներ, կրծքավանդակ և կրծքավանդակի օրգաններ, որովայնի և կոնքի օրգաններ/ վնասվածքների դեպքում անհետաձգելի ճառագայթային ախտորոշումը: Վիրահատական միջամտությունների ժամանակ կամ վաղ հետվիրահատական շրջանի ճառագայթային հետազոտումներ:

Մանկական ճառագայթային ախտորոշում. Նորածինների, տարբեր տարիքի երեխաների և պատանիների ճառագայթային ախտորոշման որակին առաջադրվող պահանջները: Տարբեր տարիքի երեխաների անշարժացում /ֆիքսում/: Սեդատիվ միջոցների օգտագործում: Մանկական տարիքում ճառագայթային հետազոտման ցուցումները և հակացուցումները: Կոնտրաստ նյութերի ընտրությունը՝ կախված հետազոտման նպատակից և հետազոտվողի տարիքից: Երեխաների համար հատուկ կոնտրաստ նյութեր:

Նորածինների մոտ կրծքավանդակի և որովայնի օրգանների ախտաբանական վիճակները: Սրտի և անոթների զարգացման արատները: Միզասեռական օրգանների զարգացման արատները: Միզուղիների վարակ: Մանկական հասակում օբստրուկտիվ ուրոպատիայի տարբերակիչ ճանազայթային ախտորոշումը: Վիլմսի ուռուցք:

Մանկական հասակում ոսկրերի և հոդերի վնասվածքների առանձնահատկությունները, ոսկրերի սերտաճման առանձնահատկությունները կոտրվածքի ժամանակ: Ազդրի բնածին հոդախախտ: Կմախքի համակարգային և տեղային անոմալիաներ: Ռախիտ և ռախիտանման հիվանդություններ:

Ճանազայթային ախտորոշման կաբինետներում անհետաձգելի բժշկական

օգնություն. Անհետաձգելի վիճակների դեպքում վերակենդանացման և իտենսիվ թերապիայի հիմունքները: Սրտի հանկարծակի կանգ: Սուր շնչառական անբավարարություն: Անհետաձգելի օգնություն: Վնասվածքային շոկ, վերակենդանացման միջոցառումներ: Սուր արյան կորստի դեպքում անհետաձգելի օգնություն: Այրվածքներ, անհետաձգելի օգնություն /ստերիլ վիրակապ, հակաշոկային միջոցներ/: Էլեկտրատրավմա, անհետաձգելի օգնություն:

Բրոնխիալ ասթմայի նոպա, անհետաձգելի օգնություն: Երեխաների մոտ տարբեր էթիոլոգիայի կրուպ, անհետաձգելի օգնություն: Ալերգիկ ռեակցիաների հիմնական տեսակները, բուժական միջոցառումները ալերգիկ ռեակցիաների ժամանակ: Անաֆիլակտիկ շոկ, կլինիկական դրսևորումները և անհետաձգելի օգնությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Линденбратен Л.Д., Королюк И.П. Медицинская радиология. М.: Медицина, 2000.
2. Современные стандарты анализа лучевых изображений. Под ред. Т.Н. Трофимовой. Изд.-во Балтийский медицинский образовательный центр. 2016. 300с.
3. Неотложная радиология. тт.1,2. Под ред. Б.Маринчек, Р.Ф. Донделинжер. пер с англ. ВИДАР, 2009.
4. Лучевая диагностика. Голова и шея. Мёддер У., Конен М., Андерсен К., Энгельбрехт Ф., Фриц Б. МЕДпресс-информ, 2010. 304 с

5. Ланге С. Лучевая диагностика заболеваний органов грудной клетки: руководство / С. Ланге, Д. Уолш ; пер. с англ. под ред. С. К. Тернового, А. И. Шехтера. - М. : ГЭОТАР-Медиа, 2010. - 432с.
6. Национальное руководство. Лучевая диагностика болезней сердца и сосудов. Коков А.М.. Изд. Гэотар-Медиа. 2011. 688с.
7. Комплексная лучевая диагностика в уронефрологии, сост. Л.А. Тимофеева, А.В. Быкова, Т.Н. Алешина Издательство Чувашского государственного университета им. И.Н. Ульянова, 2013. 96с.
8. Лучевая диагностика заболеваний костей и суставов. Бургенер Ф.А., Кормано М., Пудас Т. Под ред. С.К. Тернового, А.И. Шехтера. ГЭОТАР-Медиа, 2011. 432 с.
9. Лучевая диагностика. Заболевания молочных желез. У. Фишер и др. МЕДпресс-информ, 2009. 256с.
10. Рентгенодиагностика в урологии. П.В.Власов, П.М. Котляров, Ю.Н. Жук. ВИДАР. 2010. 95с.
11. Практическое руководство по ультразвуковой диагностике. Общая ультразвуковая диагностика. Изд. 2-е. под ред. В.В. Митькова. ВИДАР, 2011. 720с.
12. Б.Блок. УЗИ внутренних органов. 2-е издание. МЕДпресс-информ, 2011. 256с.
13. Викрэм Догра, Дэбра. Дж. Рубенс. Секреты ультразвуковой диагностики. МЕДпресс - информ, 2009. 564с.
14. Ультразвуковое исследование. Иллюстрированное руководство. Олти Дж., Хоуи Э., Вульстенхульм С., Вестон М. Перевод с англ. / Под ред. В.А. Сандрикова. ГЭОТАР-Медиа, 2010. 256с.
15. Сенча А.Н., Могутов М.С., Патрунов Ю.Н., Пеняева Э.И., Кашманова А.В., Сенча Е.А. Ультразвуковое исследование с использованием контрастных препаратов. ВИДАР, 2015. 144с.
16. Ма О. ДЖ., Матиэр Дж. Р., Блэйвес М.. Ультразвуковое исследование в неотложной медицине. Бином. Лаборатория знаний. 2013.
17. Ультразвуковая диагностика. Практическое решение клинических проблем. Том 1. Узи живота. Эдвард И.Блют, Кэрол Б.Бенсон, Филип У.Раллс, Мэрлин Дж.Сигел. Медицинская Литература. 176 с.
18. Буланов М.Н. Ультразвуковая гинекология. Курс лекций в 3-х томах. ВИДАР, 2011.
19. Семизоров, А. Н. Рентгенологическое и ультразвуковое исследование при заболеваниях суставов. Романов С. В. - 3-е изд., перераб. и доп. М. : Видар, 2008. 216.

20. Хофер Матиас. Компьютерная томография. Базовое руководство. М. Медицинская литература, 2008.
21. Терновой С.К., Абдураимов А.Б., Федотенков И.С. Компьютерная томография. М.: ГЭОТАР-Медиа, 2009.
22. Сергеев В.А. Рентгеновская компьютерная мультиспиральная томография сердца. ГЭОТАР-Медиа, 2009.
23. Труфанов Г. Е., Фокина В.А. Магнитно-резонансная томография. СПб, 2007.
24. *Лишманов Ю.Б., Чернов В.И. Радионуклидная диагностика для практических врачей. Практическое руководство. 2004.*